UNESCO-ի Հայաստանյան Ազգային հանձնաժողով
Գլխավոր քարտուղար՝
պր-ն Հ. Մինասյանին

Առաջարկություններ

1. Կազմակերպել և անցկացնել միջազգային գիտաժողով հետևյալ թեմայով՝ «Հայաստանի ժայռապատկերների արվեստը, որպես նյութական և ոչ նյութական արժեքների աղբյուր»:
2. Տպագրության համար պատրաստել գրքեր և բրոշուրներ նվիրված հայկական ժայռապատկերների արվեստին և պատմությանը:
3. Հավաքագրել և կառուցել էլեկտրոնային թվային շտեմարան ներգրավելով Հայաստանում և հարևան երկրներում հայտնաբերված հայկական ժայռապատկերները: Պատրաստել CD սկավառակ «Հայկական ժայռապատկերներ» և ներկայացնել համապատասխան միջազգային կազմակերպություններին, այդ թվում և UNESCO-ին:
4. Կազմակերպել և անցկացնել ուսումնասիրություններ նոր հայտնաբերված մշակույթային, մտավորական, գիտական և հոգևոր հնագույն ինտելեկտուալ կենտրոններում; Ագարակ, Ապարան (Վահանավան), Արմավիր, Տաթև:
5. Օժանդակել գիտական հիմնադրամի ստեղծմանը նվիրված հնագույն արվեստի, ժայռապատկերների նյութական և ոչ նյութական արժեքների պահպանմանն, ուսումնասիրմանն և զարգացմանը:
6. Օժանդակել հայկական ժայռապատկերներին նվիրված Web պորտալի ստեղղծմանն և զարգացմանը:
7. Օժանդակել «Հայկական ժայռապատկերներ - նորագույն բացահայտում և մեկնաբանում» եռալեզու ֆիլմի ստղեծմանը:
8. Ներկայացնել World Heritage ցանկի ներգրավման համար հայկական ժայռապատկերների հնագույն և խոշորագույն կենտրոններ (սայթեր):
9. Հրապարակել եռալեզու մասնագիտական ամսագիր նվիրված հնդեվրոպական ժողովուրդների ժայռապատկերների պատմությանն ու արվսետին:
10. Աջակցել համապատասխան մասնագետների և գիտնականների ուսուցման և վերապատրաստման գործում, միջազգային խոշորագույն

գիտական և կրթական կենտրոններում (Իտալիա, Ֆրասիա, Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Շվեդիա):

11. Օժանդակել հնագիտական լեզվաբանության մշակույթի և ժայռապատկերների ուսումնասիրման կենտրոնի ստեղծմանը:
12. UNESCO-ի Հայկական Ազգային հանձնաժողովի կազմում ստեղծել հայկական ժայռապատկերների արվեստի («Armenian Rock Art») հանձնաժողով (բաժին կամ կոմիտե):

Մի խումբ հայ գիտնականների, մտավորականների և մասնագետների անունից, պրոֆ. Գ. Վահանյան (Member of the UISPP - Union Internationale Des Sciences Prehistoriques Et Protohistoriques, CISENP - International Scientific Commission on "The Intellectual and Spiritual Expressions of Non-Literate Peoples", International Rock Art Commitee, ICOMOS, Centro Camuno di Studi Preistorici)

30.08.07